

## Սյուզաննա Գրիգորյան

Արվեստագիտության թեկնածու

Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան  
grigoryansyuzanna20@aspu.am

### ՄՈՆՈԲՄԵՆՏԱԼ ԽՃԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՋԵՏԻՈՐՅՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Բանալի բաներ:* մոնումենտալ արվեստ, կերպարվեստ, խճանկարչություն, դեկորատիվ հարդարանք, Երևան, արտաքին հարդարանք, Մարտիրոս Սարյան, վիճապագորգ

«Ժպտա՛մ Երևան», «Գեղեցիկ Երևան» նախագծեր, որոնց շրջանակներում նոր հնչեղություն ստացան մեզ արդեն ծանոթ երևանյան կառույցները. Հովհաննես Թումայանի անվան տիկնիկային թատրոնի գլխամասը զարդարվեց գունեղ, մանկական ազնվություն արտահայտող խճանկարով, Մոսկովյան փողոցի շենքերից մեկի պատը՝ մեծանուն հայ նկարիչ Մարտիրոս Սարյանի «Իմ բակը» կտավի խճանկար-պաննոյով, իսկ Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը առավել գրավիչ դարձրեց՝ երաժշտությունը կերպարվեստի լեզվով ներկայացնող, հոյակերտ աշխատանքը:

Պատահական չէր անդրադարձը հոյակերտ կերպարվեստի այս տեսակին, որի կիրառումը՝ հայ մշակույթում, դարերի խորքից է գալիս:

Մոնումենտալ և դեկորատիվ արվեստների յուրօրինակ համադրում հանդիսացող խճանկարներ, ըստ գրավոր աղբյուրների, կիրառվել են դեռևս ուրարտական տաճարների հատակները զարդարելու նպատակով: Պատմահայր Մովսես Խորենացին (5-րդ դար), տալով Տուշպայի նկարագրությունը նշում է. «Շինէ և ընտիր ընտիրս և բագունս ի մեջ քաղաքին ապարանս ի պէս քարանց և ի գունից զարդարեալս, կրկնայարկս և եռայարկս, և ըստ պատեհի իւրաքանչիւր՝ արեգակնակս» (Խորենացի 1981, 65–67):

Իտոսելով ուրարտական արվեստի մասին՝ պատմաբան Լեոն գրել է. «...Ուրարտացի քարտաշները գիտեին և գեղեցիկ զարդարանքներ շինել գույնզգույն քարերի դասավորումով: Սա մի տեսակ մոզաիկա էր: Թուփրակ-Կալեի տաճարի հատակը ծածկված է այդպիսի մոզաիկանման բանվածքներով, որոնք բաղկացած էին համակենտրոն շրջանակներից միմյանց ագուցված՝ ընտիր ճաշակով: Եվ այսպես տեսնում ենք, որ քարերի գույնից զարդարանքներ կազմելը մի արվեստ էր, որ մնացած է հայկական ճարտարապետության մեջ» (Լեո 1966, 236–237):

Հետագայում, պեղումները երևան հանեցին իրեղեն նմուշներ. ՀԽՍՀ ԳԱ՝ 1949 թվականից գործող արշավախումբը (ղեկ.՝ Բաբկեն Առաքելյան (1912–2004)) հայտնաբերեց Գառնիի ամբողջ ճարտարապետական ամբողջ համալիրի ամրաշինական ու քաղաքացիական կառուցվածքների մնացորդները՝ որոնց թվում նաև բաղ-

նիքի հայտնի խճանկարը (Մահինյան 1983, 10): Գառնիում բաղնիքի նախասրահի հատակի վրա պահպանված խճանկարը նախաքրիստոնեական Հայաստանի մոնումենտալ գեղանկարչության (խճանկարչություն) մեզ հասած եզակի նմուշներից է:

Վերջին տարիներին հայոց հնագույն մայրաքաղաք Արտաշատում հնագետ և պատմաբան Ժորես Խաչատրյանի ղեկավարությամբ կատարված պեղումների արդյունքում հայտնի դարձան հասարակական բաղնիքի տարբեր սենյակների հատակները՝ զարդարող II դարի վերջի և III դարի սկիզբի խճանկարները (Խաչատրյան 1978, 56): Չմոռանանք նշել նաև Դվինում, Զվարթնոցում և հատկապես Երուսաղեմում գտնվող առավել ամբողջական պահպանված հատականկարները:

Հոյակերտ խճանկարի մասսայականացում տեղի ունեցավ արդեն Խորհրդային Հայաստանում:

Շուրջ յոթանասուն տարիների ընթացքում երկրի մշակութային կյանքը մեծապես փոխվեց: Հասարակության մեջ աստիճանաբար փոխվում էին արվեստի դերի մասին եղած պատկերացումները: Մշակութային կյանքն առաջնորդվում էր ժամանակի գաղափարախոսական-գեղարվեստական պահանջներով: Մինչ այդ, արվեստի այս տեսակին իրենց աշխատանքներում դիմել էին *Վարդգես Սուրենյանցը* (1860–1921)՝ Յալթայի հայկական եկեղեցու ներքին հարդարման էսքիզներում, նկարիչ *Եղիշե Թաղևոսյանը* (1870–1936)՝ 1907 թվականին ստեղծված ինքնադիմանկարը (Աղայան 2009, 39), նույն թվականին կատարած նրա ուսուցիչ Վասիլի Պոլենովի դիմանկար խճանկարը, և 1908 թվականին եկեղեցու բարավորի համար պատրաստած Փրկչի գլուխը (Վարդանյան 2010, 70):

Այնուհետև հաստատվեցին խորհրդային կարգերը: Հայաստանում, ինչպես նաև խորհրդային մի շարք հանրապետություններում, այդ տարիներին ժողովրդական լայն շերտերի համար, ընկալելի էին կերպարվեստի ավելի իրապաշտական, պարզ պատմողական ձևերը: Ինչպես հեղափոխության և սոցիալիզմի շինարարության առաջին տարիներին, այնպես էլ երկարատև պատերազմի ընթացքում արվեստի հիմնական խնդիրը ժամանակի պահանջներին համահունչ լինելն էր, ավելի շատ պարզ ու հասկանալի ասելիք ունենալ: Դա էլ, ըստ էության, սոցոռեալիզմի (սոցիալիստական իրապաշտության) արտահայտչաձևերից մեկն էր:

Հայրենական մեծ պատերազմի ավարտը դարձավ հայ կերպարվեստի վերընթացի սկիզբը: Արվեստագետները՝ նկարիչներն աշխատում էին առաջին հերթին վերագտնել նախորդ տարիներին կորցրած գեղարվեստական կարևորագույն չափանիշները:

Քաղաքաշինությունը զուգորդվում էր «հոյակապ արվեստի» բուն զարգացումով: Այն ընթանում էր իր կոնկրետ դրսևորումներով՝ ճարտարապետական կառույցներում, քանդակագործական կոթողներում, բարձրաքանդակներում, խճանկարում և այլն:

Հասարակության մեջ իրենց յուրահատուկ գեղարվեստական հնարավորությունների շնորհիվ հաստոցային և կոթողային արվեստը կոչված էր լուծելու խնդիրներ, որոնք կանգնած էին սոցիալիստական իրապաշտության (ռեալիզմ) առջև. յուրովի ընկալելով մարդասիրության գաղափարները և կյանքի խոր իրապաշտական արտացոլումը, որն ոգեշնչված էր կոմունիստական իդեալներով:

Պահանջ է առաջանում գտնել բազում «անձայրածիրե հասկացությունների տեսանելի մարմնացում, օրինակ, այնպիսիների, ինչպիսիք են Աշխարհ, Գիտություն, Տիեզերք և այլն: Այդ տարիներին ստեղծվում են մի շարք խճանկարչական աշխատանքներ արվեստագետներ՝ *Հովհաննես Թորոսյանի* (1895–?) («Ստեփան Աղաջանյանի դիմապատկերը»), *Դերենիկ Դանիելյանի* (1912–1994) («Հին Կասկադի շատրվանները»), *Վալենտին Պողոսովի* (1924–1998) և *Հարություն (Հարիկ) Պողոսյանի* (1916–1995) («Ավետիք Իսահակյան» և «Ալեքսանդր Շիրվանզադե»), *Սերգեյ Փարսաջանովի* (1924–1990) («Կազակ Մամայր», «Երեք իշուկներ», «Եղիշե Չարենց») կողմից:

Ժամանակի ընթացքում խճանկարները հաստոցային չափսերից դառնում էին ավելի մոնումենտալ ու ծավալուն: ՀԽՍՀ-ում տարածական արվեստների համադրման խնդիրները ծրագրային բնույթ էին ստանում: Քաղաքաշինության ծավալման և հասարակական հոյակերտ շինությունների ստեղծմանը զուգընթաց առանձին շինությունների հարդարանքը ստեղծելիս համագործակցում էին ճարտարապետները, քանդակագործները և գեղանկարիչները. *Վան Խաչատրյանի* (1926–2019) («Ավարայրի ճակատամարտը» («Վարդանանք»), Երևանի «Անի» հյուրանոցին կից բնակելի շենքի կողմնապատի և Ա.Սպենդարյանի անվան երաժշտական դպրոցի ճակատային հատվածը զարդարող խճապատկերները), *Հովհաննես Մինասյանի* (1928–1972) («Ռիթմեր», «Ներփակ կորեր» և «Երկրաչափական տարածություն»), *Միհրան Սոսոյանի* (1928–1992) («Մերոպ Մաշտոց», «Մովսես Խորենացի», «Անանիա Շիրակացի», «Թորոս Ռոպին», «Մխիթար Հերացի», «Խաչատուր Աբովյանը և Պարրոտը»), *Գարրի (Գառնիկ) Սմբադյանի* (1929–2003) («Հայաստան» (համահեղինակներ՝ *Հարություն (Հարիկ) Պողոսյանի*, *Ջարգանդ Հարությունյանի* (1929–1993), «Արգիշտին որսի ժամանակ», «Գյումրվա հարսանիք», «Աստղիկի ծնունդը»), *Կարապետ Եղիազարյանի* (1932–2006) («Դրախտ», «Ծիլն ու արևը» (համահեղինակներ՝ *Մկրտիչ Քամալյանի* (1915–1971) և *Յուլյա Ազիզյանի* (1912–1990), «Խաչատուր Աբովյան», «Կապի պատմություն», «Գիտություն» և «Կոսմոս» եռապատկեր խճանկարերը, «Սինթետիկա», «Խաղողը», «Գարունը»), *Ֆերդինանդ Մանուկյանի* (ծն. 1941) («Գյումրեցիներ», «Սասունցիների պարը»), *Կարեն Աղամյանի* (ծն. 1946) («Առաջընթաց» եռապատկերը), *Ջոհրաբ Միրզոյանի* (ծն. 1947) («Արև» (համահեղինակներ՝ *Բարկեն Բոլոզյանի* (1909–1994) և Կարեն Աղամյան) «Հայրենիք», «Թռիչք», «Ծնունդ», «Մկրտություն», «Վերածնունդ») և այլոց գործերը զարդարել և զարդարում են Հանրապետության տարբեր քաղաքներում կառուցված շենքերի ներքին և արտաքին որմերը:

Բացի վերը թվարկած արվեստագետների խճանկարչական աշխատանքներից՝ Խորհրդային Հայաստանի քաղաքներն ու կառույցները զարդարող մի շարք գործերի հեղինակների անունները մեզ հայտնի չեն, մի շարք խճանկարներ էլ պարզապես ապամոնտաժվել են:

Անշուշտ, խորհրդային ժամանակաշրջանն արդյունավետ էր Հայաստանում խճանկարչական արվեստի վերագարթնքի համար:

Հետխորհրդային տարիներին մեզ բաժին հասած քաղաքական, տնտեսական ճգնաժամերը իրենց անմիջական ազդեցությունը թողեցին մշակույթի, այդ թվում վերագարթոնք ապրած խճանկարչական արվեստի վրա:

Եվ միայն 2000-ականներին քայլեր իրականացվեցին նորից միջավայրը հոյակերտ արվեստի գործերով՝ խճանկարներով, զարդարելու համար: Արդեն երորդդ հանրապետության մայրաքաղաք Երևանի փողոցները զարդարվեցին նոր, առավել վառ գուներանգով խճանկար-պաննոներով:

Ստորև կանդրադառնանք այդ աշխատանքներին.

2011 թվականի սեպտեմբերի 14-ին Մոսկովյան 36 հասցեում բացվեց Երևանի քաղաքապետարանի և «Ժպտա՛ Երևան» ծրագրի համատեղ նախաձեռնության առաջին աշխատանքը՝ Մարտիրոս Սարյանի «Իմ բակը» կտավի խճանկար-պաննոն (8,5×13 մ.): Բնակելի շենքի կողմնապատին ամբողջությամբ պատկերված է Մարտիրոս Սարյանի 1923 թվականին ստեղծած կտավի գունազեղ խճապատկերը: Հայ անվանի նկարչի արդեն երկրորդ կտավն էր, որ մոնումենտալ չափեր ստանալով՝ խճանկարի տեխնիկայով, դուրս էր բերվում բաց ցուցադրության:

Աշխատանքը մեծ ոգևորությամբ ընդունվեց հասարակության կողմից, և շարունակական դարձրեց նախաձեռնությունը:

1937 թվականին Երևանի կենտրոնում կառուցված Ռոմանոս Մելիքյան անվան երաժշտական ուսումնարանի շենքը նոր շունչ ստացավ 2011 թվականի դեկտեմբերի 2-ին, երբ քանդակագործ Դավիթ Մինասյանի նախագծով՝ «Երաժշտություն» խորագրով խճանկարը հայտնվեց երաժշտական ուսումնարանի ճակատային մասում: Ստեղծագործությունն իր արտիստիզմով և հետաքրքիր գունային լուծմամբ համադրում է դիրիժորի կերպարը նոտաների և ստեղնաշարի հետ, որոնք համահունչ են երաժշտական դպրոցի ոգուն: Այս աշխատանքը «Ժպտա՛ Երևան» նախագծի երկրորդ խճանկարն է: Նախագիծ, որի գլխավոր նպատակն էր արվեստի շունչ հաղորդել Երևան քաղաքի շենքերին:

Կարճ ժամանակում երևանցիների սիրելի գործերից դարձավ նաև Հովհաննես Թումանյանի անվան տիկնիկայի թատրոնի շենքի՝ մանկական վրձնի մաքրությունը ներկայացնող, հայկական հեքիաթների պյուժեներից բաղկացած խճանկարը (2012 թ.): Այն իրականացվել է Երևանի քաղաքապետարանի և ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի աջակցությամբ՝ «Գեղեցիկ Երևան» նախագծի շրջանակներում:

Խճանկարի էսքիզի հեղինակն է նկարչուհի Լուսինե Մոսոյանը: Աշխատանքը կազմված է գլազուրապատ կերամիկական «փազլներից», որոնք հակադարձ շարվածքի սկզբունքով տեղադրվել են որմին:

Նկարաշարում կիրառվել են երեխաների ճեպանկարները, որոնցում սորովի ներկայացված են Հովհաննես Թումանյանի հեքիաթների կերպարները:

Բնական քարերից՝ տրավերտին, մարմար, ֆելզիտ, բազալտ և այլն, կազմված այս խճանկարի տրամաբանական շարունակությունը հարակից բազմահարկ շենքի պատին պատկերված հանդիսատեսի դեմքերն են, որոնք բարձունքից «հետևում են» թատրոնի գործունեությանը:

Նշենք նաև, որ այս աշխատանքները իրականացվել են 2001 թվականին հիմնադրված Mane Tiles ընկերության արվեստանոցում:

Եվ ահա, վերջին նախագիծը արդեն մասնավոր նվեր էր Երևանին. «Մեզերյան կարպետ» ընկերության նախաձեռնությամբ, Կարապի լճի հարևանությամբ 2017 թվականին բացվեց 16-րդ դարին թվագրվող հայկական վիշապագորգի խճանկար կրկնօրինակը (գորգի չափ՝ 6×4մ., քարի չափ՝ 0.3×5սմ): Մարմարե, գրանիտե, ազուրիտե, տուֆ-ավազաքարե շուրջ 900 հազար կտորներից կազմված այս աշխատանքը կարծես հաստատում է «խճանկարը դարերի միջով պահպանված հավերժ գորգ է» հայտնի արտահայտությունը: Սակայն հարկ ենք համարում նշել, որ կարճ ժամանակ անց այն ստիպված էին վերանորոգել, քանզի խճահատիկները առանձնացել էին հիմնաշերտից:

Գորգի թեմատիկ ընտրությունը պատահական չէր, քանզի Վիշապագորգերը հայերիս համար ուրույն նշանակություն ունեն: Վերջիններս հաղթության խորհրդանիշ են: Հայկական գորգին հատուկ ներկայակալի կիրառությունը և բնօրինակին առավել մոտեցնելու միտումը աշխատանքը առավել արժեքավոր են դարձնում:

Հայկական գորգերը և մասնավորապես վիշապագորգերն, այսօր աշխարհի շատ թանգարաններում են ցուցադրվում: Երևանյանը առանձնահատուկ ցուցանմուշ է՝ բաց երկնքի տակ և բոլորին հասանելի:

Այս քարե վիշապագորգը մեզ ամեն անգամ կհիշեցնի՝ պարտավոր ենք հաղթելու ու մեր պատմությունը հաղթական կերտելու:

Այս աշխատանքների թեմատիկ ընտրությունը, տեսանելիության կարևորումը, ինչպես նաև մոնումենտալ չափերը վկայում են, որ դրանք միտված են արվեստը առավել լայն մասսաներին հասանելի և տեսանելի դարձնելուն:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՂԱՍՅԱՆ 2009 – Աղայան Ա., Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում, «Ոսկան Երևանցի» հր., Երևան, 2009:

ԼԵՈ 1966 – Լեո, Երկերի ժողովածու. Հայոց պատմություն, «Հայաստան» հր., Երևան, 1966, հատ. Ա:

ԽԱԶԱՏՐՅԱՆ 1978 – Խաչատրյան Ժ. «Արտաշատի VII բլրի 1973–1975 թթ. պեղումների արդյունքները», Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1978, № 8:

ԽՈՐԵՆԱՑԻ 1981 – Խորենացի Մ., Հայոց պատմություն (աշխարհաբար թարգ. Ս.Մալխասյան) ԵՊՀ հր., Երևան, 1981:

ՍԱՀԻՆՅԱՆ 1983 – Սահինյան Ս., Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, ՀՄՍՀ ԳԱ հր., Երևան, 1983:

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2010 – Վարդանյան Ս., Եղիշե Թաղևոսյանի նորահայտ «Քրիստոսի խճապատկերը», «Էջմիածին» ամսագիր, Երևան, 2010, № 9:

Syuzanna Grigoryan

Ph.D. in Arts

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan*

grigoryansyuzanna20@aspu.am

### SAMPLES OF MONUMENTAL PAINTING IN POST-SOVIET ARMENIA (MOSAIC)

*Keywords:* monumental art, fine arts, mosaics, decorative ornament, Yerevan, Martiros Sarian, Vishapagorg (Dragon carpet)

“Smile Yerevan”, “Gorgeous Yerevan” projects, within the framework of which the Yerevan structures already familiar to us have got a new significance. The facade of the puppet theater named after Hovhannes Tumanyan was decorated with colorful mosaics expressing children’s honesty, the wall of one of the buildings on Moskovyan Street was decorated with a mosaic panel painting “My Yard” by the outstanding Armenian artist Martiros Saryan, and the Music School named after Romanos Melikyan has made the work presenting music in the language of fine art more attractive.

It is no coincidence that we are talking about this kind of fine art, the use of which in Armenian culture comes from the depths of centuries.

Сюзанна Григорян

кандидат искусствоведения

*Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна*

grigoryansyuzanna20@aspu.am

### ОБРАЗЦЫ МОНУМЕНТАЛЬНОЙ ЖИВОПИСИ В ПОСТСОВЕТСКОЙ АРМЕНИИ (МОЗАИКА)

*Ключевые слова:* монументальное искусство, изобразительное искусство, мозаики, декоративный орнамент, Ереван, Мартирос Сарьян, Вишапагорг (Драконовый ковёр)

Проекты «Улыбающийся Ереван», «Великолепный Ереван», в рамках которых уже знакомые нам ереванские структуры приобрели новое значение. Фасад кукольного театра имени Ованеса Туманяна украсили красочные мозаики, выражающие детскую честность, стену одного из зданий на улице Московяна украсило мозаичное панно «Мой двор» выдающегося армянского художника Мартироса Сарьяна, Музыкальная школа имени Романоса Меликяна сделала более привлекательным произведение, преподносящее музыку языком изобразительного искусства.

Неслучайно речь идет об этом виде изобразительного искусства, использование которого в армянской культуре идет из глубины веков.